

Լաբորատոր աշխատանք N°10

Նույն զանգվածով տարբեր վառելանյութերի այրումից առաջացած ջերմությունները:

Աշխատանքի նպատակը

Համեմատել փայտի և չոր սպիրտի այրման տեսակարար ջերմությունները:
Տեսակարար ջերմությունը 1 կգ վառելիքի լրիվ այրումից ստացված էներգիան
(ջերմության քանակը) է:

Անհրաժեշտ սարքեր և նյութեր

Լուցկիներ, չոր սպիրտ, լաբորատոր կշեռք, ջրով լցված փորձանոթներ, ազ-
բեստյա ցանցեր:

Աշխատանքի ընթացքը

1. Կշեռքի օգնությամբ վերցնել նույն զանգվածով լուցկի և չոր սպիրտ: Դրանք
տեղավորել նույնական ազբեստե ցանցերի վրա: Ցանցերից աննշան բարձրության
վրա կախել նույն ոչ մեծ քանակի ջրով լցված նույնանման փորձանոթները:

2. Վառել սպիրտն ու լուցկիները և հետևել ջրի ջրերի տաքացման պրոցեսին:

3. Գրանցել տեսրում՝ որ փորձանոթի ջուրն ավելի շուտ կեռա:

Եթե սպիրտով տաքացվող փորձանոթի ջուրն ավելի շուտ եռա, քան լուցկիներ-
ով տաքացվող փորձանոթի ջուրը, նշանակում է սպիրտի այրման տեսակարար
ջերմությունն ավելի մեծ է, քան փայտի այրման տեսակարար ջերմությունը:

